

բիսպներով շրջապատուած տպաստանա-
րանն է հին բնակչաց ողք և երեխն ցոյց
առուած են ինչպէս ծերունիքն կպատմեն,
իւրեանց կորովաբազուկ անվեհեր քա-
ջութիւններն Պարսից յարձակմանց և
ասպատակութեանց դէմ, այժմ շրջա-
պատ պարիսպն կիսաւելը է: Իւրդիս ա-
րևմտեան ծայրին փոքրիկ մատուռ մի կայ
միանգամայն այժմ աւեր. իսկ հիւսիսա-
կողմն, բերդէն քիչ մի անջատ, է դար-
ձեալ միւս ևս մատուռ փոքրիկ զոր բը-
նակիչքը կանուանեն «սուրբ Պարգիս»,
ուր կան քանի մի խաչքարինք առաջն
արձանազրոց:

Տեղւոյս այդիները ոռոգող և տնային
զանազան պիտոյից համար գրեթածուած
ջրերը աղբիւրներ են, չին ժամանակին
բազմաթիւ ձեռնհաս խօջաների հոգացո-
զութեամբ խողովակներով հեռու տեղե-
րէն բերուած ինչպէս և մէկ երկուքի հա-
մար յիշեցի. այժմ երեք ջրամբարներ
կան. մինն Շնահատակի, աղբիւրի ջրայ-
առաջն, ուստի և այդիքն և պարտէզնե-
րըն կոռոգուին.*) մինն գիւղի մլջ տեղա-
ուստի խմելու և այլ պիտոյից ջուրը գործ
կածեն. և միւսն գիւղի արեելակողմն
բաւական հեռի, որ յանուն շնողին կը-
կոչուի “Առաքելի գեօլ”,

Այս գործութիւնն կատարելապէս
ծաղկած է նոցա մէջ ուստի և ամէն տա

ըի այդիք առատ արգասաւորութեամբ
կվարձատը են ժիր երկրագործի քրտինքը:
Եռհասարակ քաջ և զինավարժ են զիւ-
ղիս թնակիներն և մինչև այժմ ոչ մէկը
վասառած չէ զողի ձեռքէ, վասն զի ամէն
շրջակայ բնտկչաց մէջ ակնածելի են և
հոչակուած հին ժամանակէ ի վեր մինչև
այսօր:

(11)

ՏԵՂԵԳԻՐՈՒԹՅԻՆ ԸՆԴՀԱՅՑ.

($\mathbb{E} \left[\cdot \right]$ ပေးသော အမျိုးပြုခြင်း)

Երևանի հայությունը ՀՀ էլեկտր.

Ելապէս անուանեցաք զայս մասն. ոչ
զի յարկեմուտս կայ մասանցդ բաց յա-
րեելետն Ծիրակին բաժնէ ամսի տե-
ղեացն, այլ զի հարաւ գնացեալ յԱնւոյ
և ի Վաղզեերդէ չորից ժամուց ճանա-
պարհաւ յանկեան անդը երկուց գետոց
ընթացից գադարէ. և այլ զի երկայնի
յարկեմուտս իրբե վեց ժամուց ճանապարհ
մինչեւ ցկատարած սահմանացն Բուիկու,
և հասանէ յայնկոյս Խաղզուանու գիւ-
ղորայիցն:

Ուստի յերկու ց կողմանց գետովքն պա-
տի, և ի հիւսոյ իւրով լերամբք հաղոր-
դի ընդ լերինս Ծիրակին Անւոյ և Կա-
րուց, և հասանէ յարկեմուց ի գիւղո-
րայսն Կաղզուանու:

Ե՞ն ի սմա լերինք պատուականք, դաշտավայրք ընդարձակք. և ի գիւղորայսն գետեցերեայս լինին այզիք, և զինի, բամբակ, և բըինձ պատուական, մանաւանդ ի Նածի Պայրամ գիւղ:

(*) Այս ջուրն հնում աւելի մեծ և ընդարձակ ջրամբարի մեջ ժողոված ունենալով, գործեն զրած ջրալաց մի բանեցնելու համար. այժմ կան միայն սրբատաշ քարերով շինուած ջրամբարի և ջրաղացի աւելի մնացորդներն:

Յայսմ սահմանիւ և իւսէին աղա ոմն
մեծանուն իշխող բազմաթիւ վրանաշըր-
ջեկ Մարաց՝ ունի դքանիք մի գիւղորայս,
զրս տասամնորդէր, և տարածանէր դարօ-
տական երամակս ոչխարաց և կովուց և
ձիոց։ Խլանէր յամարան իւլերինս, և ի
ձմերան ինքն վրանովք իներքին բուրիկ
իջանէր, և զե բազմատոհմական ոքէ, և
զհարուստս ի Մարաց ընդ ձեռամք ունէր,
զնոսա աստ անդ տարածանէր ի ձմերան,
և իջուցանէր ի տունս տունս և այոց։ Խւ
մինչ զխօշավանս առեալ էր, անդ ևս
առաքէր զոմանս, որք եկեալ հասանէին,
և զխաշինս իւրեանց ի սեղանատունն լը-
նուին ի գիշերի։

Եծէր սա զպահակս ի հայոց սայլիւք և
ձիովք ըստ մէն մի փոխադրութեան իւ-
րեանց՝ վրանաց և այլոց ծանրութեանց
տարութեր լինել, խոտ պահանջեր, ձեթ
տոննոյր, և տայր փայտ գտեալ ածել։
Ուստի և այլք այսր բաժնի ձանձրա-
ցեալ էին, և ցրուեալ բազումք, բայց և
սակաւք ի մնացելոցն սիրով տանէին։
Քանիզ սա էր գտաւակից գողոց, աւարա-
ռուաց, գերջաց։ Ի ժամանակի յարձակ-
մանց Լեզկեաց՝ Պարսից, բանս դաղանի
ընդ նոսա ունելով, ոչ յարձակէին նոքա
ի սահման սորա, այլ ի մասունս միւս
բաժնիցն Ծիրակաց, թէև յաւարաց նո-
ցա բաժին իւր անշուշտ հասանէր. որ-
պէս և երկու աղջկունք և այլք գերեալ՝ ի
տան նորա կային և յաւուրս մեր; Խւ ոք
ոք յիւրոց հպատակաց երթայր ի գողու-
թիւն, պարտաւոր էր բազմօք զբաժին
նորա հանել. զի ի զէպ ժամու նա բաւէ
աղատել և պաշապանել գողոյն, և չտալ
ի ձեռս։

Եւ զե տարածեալ էին՝ որք սմա հը-
պատակին, ի Առւսաստան, ի Պարսկաս-
տան, և յօսմանեան երկրի, եթէ ուրեք
ոք ի գողոց գողանայր ինչ, իսկոյն ածեալ
մուծանէ յայլ ասհման, և հեռացու-
ցեալ յորոնողին ի ձեռն իւրայնոցն ըստ
կամի վաճառէ, որով և բազում անգամ
անհետ առնեն զգողունին։

Օսամ տեսի, այր յոյժ յոյժ ալւոր և
հինաւուրց. բայց ամեննեին չըր նուազեալ
յուշոյ. լրաւաք նորա բազում պարտ էին
լինել, զի գիտէր քաջ քաջ, զի՞նչ ինչ
անցք ի խորհրդարանս անցանեն։

Սա երդուեալ էր, և ամեննեին ոչ մը-
տանէր ի Կարուց քազաք, և ի գիշերի
շուրջ զվրանօքն զգուշապահ պարտ էին
յիւրոց հպատակաց ըստ կարգի գալ և
սպասել, ընդ սմա ոչ ոք ի Փատշայիցն Կա-
րուց բաւեցաւ բարւոք վարել, բայց մի-
այն Ալբրի փաշայն առ որ և բազում ան-
զամ երթայր, և մեծապատիւ ընդունե-
լութիւն զտանէր, զի և հաց և կերտ-
կուր նորա առեաա էր։

Վ յապէս այսր բաժնի ժողովուրդք բազ-
մօք ցրուեալ գոլով, նուազունք են ի
սմա զիւղորայք և աւերակք բազումք,
զորոց ասացուք։

ԳԱՀ-ԴՐՅԱՅՑ ԵՐԼ-ՃՐԵԿԱՆ Ծիրակաց

1. Ելիմ. Տ. վանիք աւերակ։
2. Տաշնիկ. Տ. :
3. Տիկար. Հ. և Տ. հրաշակերտ եկե-
ղեցի այլաձեւ յանուն Առւրբ Երրորդու-
թեան, ոչ սակաւ և վնասեալ, կան զըր-
ջանակաւ նորա մեծազիր փորեալ արձա-
նազրութիւնք, որք ասեն լինել վան
շուրցն, յոր յԱզրեկէ աստ իջանեն. թէ

մրգէս և զիարդ յամենայն եւթնեակս ի
մէջ երկուց գիւղիցն բաժանել սահմա-
նեալ է:

4. Եղբեկ. Ա. ուր ուրեք զայն անուն
գիւղ լսեմք, պամրտ է համարել աղձա-
տեալն բառիս Եղարակ: Ես աստ վանք գե-
ղեցիկ, զոր Վեծ ժամ կոչեն:

Երկուց գիւղեցս մերձաւոր ի ձոր ինչ
ջրավաղ և խոտավէտ ի զուարձալի վայրի
է վանք մեծաւ մասամբ անկործան, Պէշ-
քիլսէ այժմ ասացեալ, գոլով նորա
հինգ տաճարեան, որոց երկուցն անուն
տան Ոուրբ Վարդիս, և Ա. Ատեփաննոս:

Որպէս պատմեն, շինուածք տեղւոյս
լինել վաստակ մեծի և զարմանալի աշխա-
տասիրութեան: Պարիսսպք, գուցէ և
խցկունք ամբողջ իցեն: Յանմերձենալի
տեղւոյ ինչ մեղուանոց կամարակապ,
որ այժմ է տակն վայրի աղաւնոց բնակա-
րան: Թէպէս լցեալ աղբեկը նոցա, ի
բարձուէ կալատեղի սալայտակ, և արտո-
րայք նորա ի լերին իւրում: Վսեն խողո-
վակ շինեալ վերուստ ի վայր, զի ոչ ածեալ
զկաթնատու անսատունս ի վանք անդը. ի
վեր անդը կթեն, և հեղուն ընդ այն, որ
գայ ինքնին իջանէ ի վանս:

Գուցէ սա իցէ յիշտակեալն ի Վա-
մուելէ երիցուէ: “Վեծապատիւ վեսան
Վարդիս զինի բազում շինուածոց բերդից
և եկեղեցեաց, զհրաշալի զվանս, զնցկու-
նըս շինեաց պայծառ պատկաւ զարդա-
րեալ զսուրբ քաւարանն, որ է սուրբ Վար-
դիս,,:

5. Սօրխումուկ. Տ. փոքրիկ մատուռն.
Փազարձըս աւեր հինգ բերդ:

6. Ռողնի. Ա. և է մեծ գիւղ: ունի
եկեղեցի հնաշէն. վերնայարկն բերդ:

7. Ջըռչի. Ա. և սա մեծ գիւղ:

8. Վերին Բռուիկ. Ա. ընդ սահմանս
անդաստանաց նորա անցեալ. ելեէջեւք
ընդ հանքային ածխոտ, և ընդ այլ հան-
քային վայրս. յորս կան և մասնաւոր
ըլքակը ինչ զանգեալք ի հողոյ և ի քա-
րանց, որ ինձ թուեցաւ մնացորդք ինչ
հրաբղեցից, ի հարաւ խոտորի ի միւս
վարի Բռուիկ, յարեւմուտս ի պարտիզուտ
և ի ծառաւէտ գիւղորայսն Վաղզուանու,
յորս և թիւթիւն իսկ լինի:

Ի թիւկունս Բռուիայ և Ջըռչոյ էլեա-
ոլն բարձր. յորում և բերդ. այլ բքա-
բեր հողմունք յուղեալ ի լերանց անտի
ի բազում աւուրս արգելուն զճանապարհ
երթևեկութեան ի միոյ ի միւսն:

Ջըռչի ոչ միայն զՄասիս տեսանէ,
այլ և գիտէ յԵրարատ, և ընդ ծագել ա-
ռաւօտեան՝ նշոյք արեւու յապակեաց
Վաթուղեկէին Վաղարշապատու ճաճան.
չեալք, նշանակին զնատ:

9. Միկըեկ. Ա. հին բերդ. ներքնա-
յարկն եկեղեցի, առ որով և Պաճալը ա-
ւերակ:

10. Եախօսւան. Ա. և է մեծ գիւղ:
Հնաշէն եկեղեցի նորա սուրբ Վաեփան-
նոս, վերնայարկն բերդ. և ի ստորեւ գետ-
նափոր նկուղ և առընթեր: Օշրջանա-
կաւ մեծագիր արձանազրութիւն: Աս ի
շարժոյից երկրի վսառեալ է:

Մըրեն հին աւերակ, զոր այլազգիք խարսապայ կոչեն. յընդարձակ և ի դիւրավայր տեղւոց տարածեալ իբրև քաղաքատեղի, կրկին եկեղեցիք նորա քայքայեալ. և այլ բազում աւերակք: Ասացին զաւլինել շնուռած Վեստ Ամրգի, զոր և. Ա. Զ, գնէ ծառաքար Եւան: Իսկ Վամուէլ երեց զբէ. Ա՞նակ զօ՞առաքար վանքըն բերդ արարեալ պարսպեալ հաստահեղոս բրդամբք, : Գուցէ առ աւանաւն էր, և այդ վանքը համանուն:

11. Բագարան, և. առ. առ աջնովք էր պատեղի մեջենաց. յետոյ եղեւ աւան: Վշոտ իշխանաց իշխան, յորժամ թագաւորեաց, աստ հաստատեաց զթագաւորական աթոռ իւր. և զբարեձեռւթիւնս արքայի յանկաւոր շքեղութեամբ իմն կարգադրեաց:

Ի բարձուէ ի ձոր իջանէ ընդ լեռնափակ ձանապարհս քարուտս և գժուարինս, հասանէ, ի բարձրադիտակ վանքն սուրբ Գեորգեաց. յոր և ցայսօր ուխտաւորք յաճախնեն, որ հայի յԱխուրեան: Վռ ստորոտով սորա հին քաղաքն. ուր և այժմ ի ներքուստ զիիւզն փոխադրեցին. ի ծործորս նորա կան և այլ երեք եկեղեցիք աւերեալք. և դամբարանք արձանազրեալք: Վատ կան այդիք, և ծառք պաղատուք, լինի և զինի, բայց անձուկ է տեղի նոցա. առ սերմանացան լինելոյ այլոց սերմանեաց, յայլ զիւզս գնացեալ սերմանեն, հնձեն, և բերեն ի տուն, և կամ փոխանակեն ընդ բերոց իւրեանց:

12. Տիւզիւչետ, Տ. Առաջ զառաջեաւ Եխորեան անցս այնակ յառատութեան

իւրում անկասկած անցանել ընդ ամսյի տեղին:

13. Արփալու. Տ. ի քարաժայոի:

14. Համի Պայրամ. Տ. յանկեան անդ:

Տեսաք յայսոսիկ, զի առաջին հայեցի անուանք գիւղօրէիցս մեծաւ մասամբ խանգարեալ, և իսպառ անհետ եղեալ: Օի ընդ ժամանակս ժամանակս յամայութեան երկրին ի Հայոց և ի Պարսկաբնակն լինելոյ, առաջինքն խափանեցան. և նոր ի նորոյ անուանք եղան, մանաւանդ ի բնակելոյ անդ մեծի ու բուք, և կամ զիւղատեառն անուամբ նոր կոչումն եղեալ է:

Եւ ընդ այն զարմանամ, զի որք գաղթեցինն յԱրևելեան Շիրակ՝ ոչ ոք ի զիւղականացն, և ոչ ի վերակացուացն հսկողութիւն եղե, կամ զին անուանս դասնել, կամ հայեցի նոր անուն դնել: Եյլ ըստ անուան աւերակացն վարել շատ համարեցան. ապշեալք ի գործ և ի վաստակ, և ոչ եռանդավառեալք ի նախանձ հայրինի ակզին:

Յիշատակի առ պտտմաբանս, Պագրեվանք ի գաւառին Շիրակայ. մեք ոչ բառեցաք յաւանդութեանց երկրացւոցն զիտել, թէ մոր իցէ, յորում բաժնի. այժմ հետք ինչ մնացորդաց շնութեանն կացեալ մնացեալ իցէ: Վիայն այս վանք վաղնջական վանաց մին եզ, զի 645. Վ. Գ ամի Բարսեղ Ճ'ոն կայը առաջնորդ. որ և արար ընտրութիւն շարականաց, և ասել իսկ հարի լինի, թէ և առ կամսարականօք էր վանք հաչակեալ. և յաւուրը Արտասայ. 928. Յ՛Ն. երեխնորոգութիւն վանաց:

Եւ Ճ. Մ. Զ. յիշատակէ ի սահմանս գաւառիս, վանք մի մեծաշեն. զոր 1751 նորոգեաց Խղեա վարդապետ ոմն Ալշշկերտցի այր հզօր, որ և յետ նորոգութեանն, իբրև դիմեցին բազմութիւնք Լեզկի ասպասակաւորաց. նա ինքն եւ լեռ ընդ դէմ նոցա եհար ի նոցանէ նիզակաւ, երեք հարիւր այր: Բայց և ինքն յետոյ վերաւորեալ հրացանիւ ինոցանէ, մեռաւ, և միաբանք վանացն ցրուեցան յետոյ անտի:

Օչյս վանս ըստ անուան չէ նշանակեալ. գուցէ կամ պարտի լինել Հոռոմոսին վանք, կամ սուրբ Ապրդսի: Օք յամենայն սահմանս գաւառիս մեծաւ մասամբ անկործան զերկոսին զայսոսիկ տեսանեմք. իսկ մնացեալքն ամենայնիւ քայքայեալ բաց յեկեղեցեաց ինչ նոցա:

“Կազի և Տիկորի բնակիչք ասացին, թէ ո՞վ գիտէ, ի հարիւր և կամ ի հարիւր յիսուն ամաց հետէ պարտ է լինել ամայութիւն սուրբ Ապրդսի:


Թողումք զառաջինսն, տեսաք զԵրեւելեան Ծիրակ ամայի և թափուր ի բընակչաց. այժմ ո՞րպիսի քաղաքաւ քաղաքաւ պայծառացաւ. և քանի քանի գիւղորայք նորա լիք լիք Հայազգի բնակչօք. և քանի քանի ուրախաղին ի վարել և ի հնձել. անկասկած կան մնան թէ ոչ ի գաղտնի գողոց, այլ յաւարառուաց և ի գերչաց:


Իսկ Ապրուց քաղաք յայն անցուկ վայրի տունք Հայոց խիտ առ խիտ մի զմիով, չասացից նկուղք գետնափորք. և գիւղորայք նորա գիւղք ի վերայ գիւղեց, և լի բազմամարդութեամբ: ոչ տեսի և ոչ լուայ, թէ ոք ի գիւղականացս երթեալ

իցէ ի Ա. Պոլես ի գործ և ի վաստակ, որպէս ի Վան, և ի Տարօն է տեսանել: Եւ այս ակն յայտնի ցուցանէ, թէ վաստակ և շահ յոտին ունէին. և բարեբերութիւն երկրին նպաստամատոյց էր, այնչափ զի զինքեանս շահէին, զԵրքունի հարկս վճարէին. և հարստահարութեան բանաւոր գիւղատեարցն տանէին. և Տէլի անուանեալ զօրացն վանատուր լինէին. և ապիրատութեաննոցա և պժգալի եղեռնութեանց է որ համբերէին, է որ գաղտակծութեամբ գրամոց զառաջս առնուին, և գերեաց խրեանց երբեմն գերեզարձ լինել բաւեին:


Եյլ յոդիս ապաստանութիւն սոցա ի բազմաց աստի, և եւթամեայ ազատութիւն ի տրոց արքունի, և ձեռնառութիւն, թէպէտ սոքա շեղեն մերձ և այնմ, զայնչափ երկիր գատարկացոյց. և զդատարկն խիտ առ խիտ բնակչօք ելից: Էամել թէ զմին ամայացոյց և զամային ելից:

Եհա յայս կայի կայ մնայ այժմ. զոր որչափ տեսաք, և որչափ բաւեցաք սառոգել գրեցաք մեք. յուսալով թէ և ի նորոգութեան աւերակացս, քաջ քաջայլք կացցեն հանդիսացին Տեղազիր և պատմաբան, զի շատ իսկ է, զոր մեք ցայս վայր տիրութեամբ սրտի և ոդւոյ զրեցաք:





ԱԵՐԻՆ ԵՐԵՄԱՆ ԵԼԵԿԵՐ-Դ ԱԾԻ ՍՈ ԳԵՎՈՐԳ-Ը.



ԱՊՈՒԱԿԱՆ ԵՐԵՄԱՆ ԵԼԵԿԵՐ-Դ ԱԾԻ ՍՈ ԳԵՎՈՐԳ-Ը.